

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է «ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

24.11.2021 12:41



ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և նախագահի առաջին տեղակալ Արմեն Ասատրյանը 2021 թվականի նոյեմբերի 22-ին մասնակցել են ՀՀ Ազգային ժողովի Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի կողմից նախաձեռնած «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկմանը:

Քննարկումը վարել է ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գևորգ Պապոյանը, որին մասնակցել են ԱԺ ներկայացուցիչները, ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վախթանգ Աբրահամյանը, ինչպես նաև գրավատների ներկայացուցիչները:

Քննարկման ընթացքում մասնակիցները նախագծի վերաբերյալ հայտնել են իրենց տեսակետերն ու առաջարկությունները:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահին իր հերթին մատնանշել և ներկայացրել է փաստաբանների պալատի կողմից վեր հանած նախագծում առկա կանոնակարգումների վերաբերյալ խնդրահարույց հարցերը:

ՀՀ փաստաբանների պալատի նկատառումներն ընդունելի են համարվել և փոխադարձ պայմանավորվածություն է ձեռք բերվել երկուստեք՝ ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ փաստաբանների պալատի աշխատակիցների համատեղ ներուժի ներդրմամբ լրամշակել քննարկվող օրենքի նախագիծը:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })